



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2017 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ուսումնական ծանրաբեռնվածությունների հաստատում: Առաջիկա իրողությունների հեռանկարային լուծումների քննարկում:
2. 2017-18 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության խնդիրների հետ կապված հարցերի քննարկում:
3. Ուսանողների հաճախումների ընթացքը ֆակուլտետում:
4. Ընթացիկ հարցեր:

Հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում գիտ-խորհրդի մասնակիցներին տեղեկացրեց, որ խորհրդի 24 անդամներից նիստին մասնակցում է 20-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Դեկանն այնուհետև ծանոթացրեց նիստի օրակարգի հարցերին, որոնք միաձայն ընդունվեցին բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը գիտխորհրդի անդամներին ներկայացրեց ուսումնական ծանրաբեռնվածությունների ամփոփիչ պատկերը, որը հաստատվեց խորհրդի կողմից: Նա այնուհետև կանգ առավ առաջիկա իրողությունների հեռանկարային լուծումների վրա: Ինչպես նախորդ նիստում, այստեղ ևս դեկանն ընդգծեց, որ 2017-2018 թթ. ու-

սումնական տարում սպասվում են բավական դժվարություններ՝ կապված դիմորդների թվաքանակի սակավության, հետևաբար նաև դրույքաչափերի ու աշխատավարձերի նվազման հետ հետ: Նա վերստին շեշտեց, որ դրանք, սակայն, կրում են ժամանակավոր բնույթ. այդ ամենը կհաղթահարվի առաջիկա երկու-երեք տարում, և համալսարանի ղեկավարությունը ջանում է՝ սահուն հաղթահարելու առաջացած բարդությունները: ԵՊՀ-ի ռեկտորատը հեռատեսորեն դեռևս տարիներ առաջ կուտակել է նյութական անհրաժեշտ պաշարներ՝ առկա դժվարությունները ցավագին չդարձնելու և սահուն անցում կատարելու նպատակով:

Առաջիկա իրողությունների հեռանկարային լուծումների քննարկման առիթով էլույթ ունեցան շատերը՝ պրոֆ. պրոֆ. Յու. Ավետիսյանը, Վ. Գաբրիելյանը, Ալ. Մակարյանը, դոց., դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը և այլք: Նրանք հնչեցրին զանազան կարծիքներ՝ որոշ ամբիոնների միավորումներից ընդհուպ նոր՝ միացյալ ֆակուլտետների ստեղծում... Առաջարկվեց նաև խիստ կրճատել ԵՊՀ-ի վարչական, այդ թվում՝ հսկիչների թվաքանակը, 1-ին կուրսեր ընդունել սահմանափակ թվով դիմորդներ և այլն:

Էլույթ ունեցողների խոսքից հետո որոշվեց քննարկումները լայնորեն շարունակել ամբիոններում՝ ընդգրկելով պրոֆեսորադասախոսական ամբողջ անձնակազմը, և գիտական խորհրդի հաջորդ նիստին հանդես գալ գրավոր կոնկրետ առաջարկություններով:

Գիտխորհրդի նախագահ Ա. Ավագյանը, անցնելով **օրակարգի 2-րդ**՝ 2017-18 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության խնդիրների հետ կապված հարցերի քննարկմանը, մասնավորապես նկատեց, որ դրանք ևս սերտորեն առնչվում են նախորդ մտահոգություններին. տարեցտարի նվազում է թե՛ բակալավրիատի և թե՛ մագիստրատուրայի դիմորդների թվաքանակը, որը, օրինակ, մագիստրատուրայի ուսուցման բնագավառում ստիպում է գնալ հարակից ամբիոնների մագիստրոսական կուրսերի միավորմանը: Երևույթը, ինչ խոսք, ցանկալի չէ, բայց դարձյալ բխում է ծագած դժվարություններից:

Օրակարգի 3-րդ հարցի՝ ֆակուլտետում ուսանողների հաճախումների ընթացքի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը մասնավորապես նկատեց, որ սեպտեմբերի 1-ից մինչ օրս, ասել է թե՛ շուրջ մեկուկես ամսվա ընթացքում, դասամատյանների հաշվառումների արդյունքում ընթացքում պարզվել է, որ որոշ ուսանողների հաճախումների պատկերը խիստ անհանգստացնող է: Դեկանը մեկառմեկ ընթերցեց բոլոր կուրսերի բացակայող ուսանողները

անուն-ազգանունները, և պարզվեց, որ ակնառու բացակայությունները հիմնականում տատանվում են 22-72 ժամերի արանքում: Նա ամբիոնի վարիչներին հանձնարարեց ամենօրյա հսկողություն սահմանել ուսանողների հաճախումների կարգապահության վրա, բացահայտել պատճառները, որպեսզի դեկանատը գա համապատասխան եզրահանգումների ու ձեռնարկի միջոցներ:

Ընթացիկ հարցերում

Լ Ս Ե Ց Ի Ն.- Հայ նորագույն գրականության ամբիոնի պատվավոր վարիչ, բ. գ. դ., պրոֆեսոր Վազգեն Գաբրիելյանի «Դիտարկումներ գրականության ճանապարհին» հոդվածների և ուսումնասիրությունների ժողովածուն տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը և դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, Վ. Գաբրիելյանի «Դիտարկումներ գրականության ճանապարհին» ժողովածուում տեղ են գտել վերջին հինգ տարիներին մամուլում և տարեգրքերում լույս ընծայած նրա ուսումնասիրություններն ու հոդվածները՝ նվիրված հայ նորագույն ու արդի շրջանի գրողների ստեղծագործությունների քննությանը, ինչպես նաև վերջին տարիներին լույս տեսած գրքերի առաջին արձագանք-գնահատումները:

Ժողովածուն կարող է մեծապես օգտակար լինել հայ գրականությունն ուսումնասիրող ուսանողներին՝ նորագույն շրջանի հայ գրականության և արդի գրականության դասընթացների յուրացման գործում, ինչպես նաև հայ գրականությամբ բոլոր հետաքրքրվողներին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն. – Վազգեն Գաբրիելյանի «Դիտարկումներ գրականության ճանապարհին» ժողովածուն երաշխավորել տպագրության և միջնորդել համալսարանի հրատարակչական խորհրդին՝ այն հրատարակելու:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ